



ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Անհատականացված ուսուցման տեխնոլոգիա

Հետազոտող ուսուցիչ՝ Մարիետա Վարդանյան
Արմավիրի մարզի Նորապատի միջնակարգ դպրոց

Մենթոր ուսուցիչ՝ Նարինե Վասիլյան

ԱՐՄԱՎԻՐ- 2022



Բովանդակություն

1. Նախաբան ----- էջ 2-3
2. Գրականության ակնարկ----- էջ 4-14
3. Եզրակացություն----- էջ 15-16
4. Օգտագործած գրականության ցանկ----- էջ 17



Նախաբան

Բոլոր ժամանակներում, ինչպես նաև հիմա հասարակության զարգացման և առաջընթացի հիմքում ընկած է կրթված և դաստիարակված քաղաքացին: Այդպիսի քաղաքացու ձևավորումն իրականանում է ուսումնական հաստատություններում: Ուսումնական հաստատություններում իրականացվում են ուսուցման մի շարք տեխնոլոգիաներ, որոնք ուղղված են ուսուցման որակի և արդյունավետության բարձրացմանը: Այդ տեխնոլոգիաների մեջ տարբերակում ենք այնպիսի տեխնոլոգիաներ, որոնք մշտապես կիրառվում են և լայն ճանաչում ունեն, և տեխնոլոգիաներ, որոնք հազվադեպ են կիրառվում: Վերջիններս գիտության մեջ ընդունված է անվանել այլընտրանքային: Այդպիսի տեխնոլոգիաներից է ուսուցման անհատականացման տեխնոլոգիան: Այս տեխնոլոգիայի կիրառումը հանրակրթական ուսումնական հաստատություններում արդարացված է, քանի որ այն հումանիստական է և այստեղ պաշտպանվում է անհատական տարիքային առանձնահատկությունների հաշվառման մանկավարժական սկզբունքը: Այս տեխնոլոգիան արդի ժամանակաշրջանում պետք է առանձնակի տեղ ունենա ուսուցման գործընթացում, քանի որ պայմանավորված համընդհանուր ներառական կրթության ներդրմամբ՝ ուսուցանվողների զգալի մասն ունի անհատականացված ուսուցման կարիք: Կան երեխաներ, որոնց մոտ գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորումն առավել արդյունավետ է իրականացվում անհատականացված ուսուցման պայմաններում:

Ուսումնասիրման օբյեկտն է ուսուցման գործընթացում կիրառվող ուսուցման տեխնոլոգիաների համակարգը:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել այլընտրանքային տեխնոլոգիաներից անհատականացված ուսուցման տեխնոլոգիան և գնահատել դրա դերն ու առավելությունը ուսուցման գործընթացում:

Թեմայի շրջանակներում անդրադարձել են հետևյալ խնդիրների՝

1. Բացահայտել անհատականացված ուսուցման տեխնոլոգիայի էությունը



«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

2. *Ծանոթանալ անհատականացված ուսուցման հայեցակարգերին և դրանց մեթոդական ու բովանդակային առանձնահատկություններին*
3. *Պարզել անհատականացված ուսուցման տեխնոլոգիայի ընդհանուր առանձնահատկությունները և ալգորիթմը*

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք վերնագրերից, եզրակացությունից և օգտագործած գրականության ցանկից:



Գրականության ակնարկ

1.1 Անհատականացված ուսուցման տեխնոլոգիայի էությունը

Այսօր ուսուցման այլընտրանքային տեխնոլոգիաների շարքին կարող ենք դասել անհատականացված ուսուցման տեխնոլոգիան, որը հիմնված է ուսուցանվողի անհատական առանձնահատկությունների, ինչպես նաև ուսուցչի և նրա անհատական աշխատանքի վրա: Ուսուցման անհատականացված տեխնոլոգիան դա ուսուցման գործընթացի կազմակերպման մոդել է, ձևը, որի դեպքում.

1. Ուսուցիչը փոխազդում է միայն մեկ աշակերտի հետ,
2. Մեկ սովորողը փոխազդում է միայն ուսումնական միջոցների հետ/ գրքեր, համակարգիչ և այլն/<https://studfile.net/preview/7338551/page:4/>

Անհատականացված ուսուցման կարևոր արժանիքն համարվում է այն, որ թույլ է տալիս ամբողջովին ադապտացնել բովանդակությունը, մեթոդները և երեխայի ուսումնական գործունեության տեմպը. հետևել նրա ամեն մի գործողությանը և կոնկրետ խնդիրների լուծման օպերացիաներին, ինչպես նաև հետևել չիմացությունից իմացության անցմանը, ուսումնական գործունեության մեջ ժամանակին կատարել անհրաժեշտ ուղղումներ: Այս ամենը սովորողին թույլ է տալիս խնայողաբար աշխատել, անընդհատ վերահսկել սեփական էներգիայի վատնումը, աշխատել օպտիմալ, որը, իսկապես, թույլ է տալիս հասնել ուսումնական բարձր արդյունքների: Անհատական ուսուցումը <<մաքուր>> տեսքով համընդհանուր դպրոցում կիրառվում է շատ սահմանափակ:

Անհատական մոտեցումը, դա.

- Մանկավարժության սկզբունք է, որի համաձայն ուսումնադաստիարակչական աշխատանքում ուսուցիչը աշխատում է ոչ միայն աշակերտական խմբի, այլ առանձին աշակերտների հետ անհատական մոդելով՝ հաշվի առնելով նրանց անհատական առանձնահատկությունները



«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

- Երեխայի հետ շփման գործընթացում շեշտը դնում նրա անհատական առանձնահատկությունների վրա :
- Ուսումնական գործընթացում երեխայի անհատական առանձնահատկությունների հաշվառում
- մանկավարժահոգեբանական պայմանների ստեղծում ոչ միայն բոլոր սովորողների զարգացման, այլ նաև յուրաքանչյուր երեխայի զարգացման համար <https://studfile.net/preview/7338551/page:4/> :

Կարևոր է ընդգծել, որ ուսուցանողը պետք է իմանա տարիքային հոգեբանություն, որն ուսումնասիրում է տարիքային տարբեր փուլերում գտնվող մարդկանց հոգեբանական առանձնահատկությունները, մտածողության և մյուս հոգեկան ֆունկցիաների զարգացման նորմերը, գիտելիքների յուրացման հնարավորությունները, ուսուցման և հոգեկան զարգացման փոխհարաբերությունները.../ Ա. Նալչաջյան. Հոգեբանության հիմունքներ , Երևան 1997 էջ 17/

Անհատականացված ուսուցումը ուսումնական գործընթացի կազմակերպումն է, որի ժամանակ ուսուցման մեթոդները, տեխնիկաները և տեմպը որոշվում են սովորողների անհատական առանձնահատկություններով, ինչպես նաև բոլոր մանկավարժահոգեբանական, ուսումնա-մեթոդական և կազմակերպչա-կառավարչական միջոցառումների համակարգով, որն ապահովում է անհատական մոտեցումը: Ուսուցման անհատականացման տեխնոլոգիան դա ուսումնական գործընթացի այնպիսի կազմակերպումն է, որի ժամանակ ուսուցման անհատական մոտեցումն ու անկատական ձևը համարվում են առաջնային:

Անհատական մոտեցումը որպես սկզբունք գոյություն ունեցող բոլոր տեխնոլոգիաներում իրականացվում է այս կամ այն չափով, այդ իսկ պատճառով ուսուցման անհատականացումը կարելի է նաև համարել <<թափանցող տեխնոլոգիա>>: Սակայն տեխնոլոգիաները, որոնք դրված են անհատականացման հիմքում՝ այն դարձնելով ուսուցման նպատակների հասնելու հիմնական միջոց, կարելի է դիտարկել առանձին, որպես ինքնուրույն համակարգ՝ տիրապետելով ամբողջական մանկավարժական տեխնոլոգիաների ողջ հատկություններին:



«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

Նախագծային մեթոդ. Ղեռևա 1919թվականին Ղալտոն քաղաքում Ելենա Պարքեստը փորձ է կատարում դաս-դասարանային համակարգը փոխարինել յուրաքանչյուր սովորողի հետ, ըստ մանկավարժի հետ համատեղ կազմված պլանի, անհատական աշխատանքով: Այս մեթոդը հաճախ անվանում են ուսուցման լաբորատոր համակարգ:

Ուսուցման այս համակարգի շրջանակներում կազմակերպվում է այնպես, որ գերիշխի աշակերտի ինքնուրույն աշխատանքը, իսկ ուսուցիչը պետք է կազմակերպի այդ աշխատանքը: Սովորական դասարաններ չկան, դասերը կազմակերպվում են առարկայական արհեստանոցներում կամ լաբորատորիաներում: Հանձնարարություններն աշակերտները ստանում են տարվա սկզբին ողջ տարվա համար, հանձնարարությունները բաշխված են ամիսների, շաբաթների վրա, յուրաքանչյուր հատվածն ավարտելուց հետո աշակերտները ներկայացնում են հաշվետվություն կատարած աշխատանքների վերաբերյալ:

Ժամանակակից հայրենական մանկավարժական պրակտիկայում և տեսության մեջ ներդասարանային ուսուցման անհատականացման տեխնոլոգիաների առավել վառ օրինակներ համարվում են հետևյալները.

- ❖ Ինգե Ունտի ուսուցման անհատականացման տեխնոլոգիա
- ❖ Գրանիցկու ուսուցման ադապտիվ համակարգեր
- ❖ Շադրիկովայի ` ուսուցում` հիմնված անհատական-կողմնորոշիչ ուսումնական պլանի վրա <https://studfile.net/preview/7338551/page:4/> :

Ուսուցման անհատականացված տեխնոլոգիաները իրենցից ներկայացնում են դինամիկանան համակարգեր, ընդգրկելով ուսումնական գործընթացի բոլոր բաղադրիչները ` նպատակներ, բովանդակություն, մեթոդներ և միջոցներ:

Ուսուցման անհատականացված տեխնոլոգիաները դասակարգվում են ըստ հետևյալ չափանիշների`

1	Ըստ իրականացման մակարդակի	Ամբողջ մակարդակով
2	Ըստ փիլիսոփայական հիմքի	հումանիստական



«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

3	Ըստ զարգացման հիմնական գործոնի	Կոմպլեկս.բիո-, սոցիալ հոգեծին
4	Ըստ ուսուցման հայեցակարգի	Ջուզակցական-ռեֆլեկտորային
5	Ըստ անհատական կառուցվածքի շեշտվածության	Տեղեկատվական
6	Ըստ բովանդակության բնութագրի	Ուսուցանող, աշխարհիկ, հումանիտար, համապարփակ, անձնայի-կողմնորոշված – դիդակտիկական, թափանցող
7	Ըստ ղեկավարման տիպի	<<դասատու>> համակարգ
8	Ըստ կազմակերպչական ձևերի	Այլընտրանքային, անհատական-խմբային, ակադեմիական-ակումբային
9	Ըստ երեխային մոտեցման	Հունախիտական-անձնային
10	Ըստ գերակայող մեթոդի	Ծրագրավորում, ինքնազարգացնող, ստեղծագործական
11	Ըստ արդիականացման ուղղվածության	այլընտրանքային
12	Ըստ սովորողների կատեգորիայի	Բոլոր կատեգորիաները

Այս տեխնոլոգիաներում նպատակներն ուղղված են.

- Երեխայի անհատականության, նրա պոտենցիալ հնարավորությունների/ ունակությունների/պահպանմանն ու հետագա զարգացմանը
- Յուրաքանչյուր սովորողի ուսումնական առարկաների կատարման միջոցների անհատականացման առաջխաղացմանը:
- Սովորողների մոտ Համընդհանուր կարողությունների և հմտությունների ձևավորում սովորողի զարգացման մոտակա գոտուն համապատասխան: Այստեղ ճիշտ կլինի հիշել Վիգոտսկու զարգացման մերձավոր գոտու / զոննայի/ տեսությունը: Այս տեսության մեջ խոսվում է զարգացման մոտակա և ակտուալ գոտիների մասին: Զարգացման այժմեական



«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

սահմանն այն է , երբ աշակերտը կարողանում է ինքնուրույն լուծել խնդիրը, որը համապատասխանում է իր զարգացման ներկա /ակտուալ/ մակարդակին:

Զարգացման մերձավոր սահմանն այն մակարդակն է, որը մոտ է նրա զարգացման ակտուալ մակարդակին, սակայն փոքր ինչ բարձր է նրանից: Այս դեպքում աշակերտն ի վիճակի է խնդիրը լուծել միայն ուսուցչի օգնությամբ: Այս զարգացումը հիմնված է երեխայի սեփական ուժերով և աջակցության միջոցով սովորելու տարբերության վրա.

- Ուսումնական դրդապատճառների և ճանաչողական հետաքրքրությունների զարգացման բարելավում :
- Անձնային որակների ձևավորում՝ ինքնուրույնություն, աշխատասիրություն, ստեղծագործականություն :

Օրինակ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք` ինտելեկտուալ /մտավոր/ ֆունկցիաների խանգարումով սովորողի հետ անհատականացված մոտեցմամբ իրականացված աշխատանքի արդյունքներն առավել ակնառու են և չափելի:: Սովորողն ազատ կարողանում է արտահայտել իր իմացությունը, փորձում է կատարել վերլուծություններ` նախատեսված / հարաբերականորեն երկարացված/ ժամանակամիջոցում, գիտի, որ ունի հանձնարարություն, որը պետք է ինքը պատրաստի և ներկայացնի/ հանձնարարությունը տրվում է` հաշվի առնելով սովորողի իմացության առկա մակարդակը/: Այս կերպ, բացի գիտելիքներից, սովորողի մոտ ձևավորվում է պատասխանատվություն, սկսած աշխատանքը մինչև վերջ հասցնելու պատրաստականություն: Այստեղ չկա երրորդ անձ, ով իր փոխարեն կկատարի իր համար նախատեսված առաջադրանքը, իսկ ուսուցիչը միայն կուղղորդի առաջադրանքի կատարման ընթացքում:

Նյութի ամփոփման նպատակով ուսուցիչը կատարում է ամփոփիչ հարցադրումներ: Դրանք սովորաբար կազմված են լինում երկու-երեք հիմնական հարցերից, իսկ մյուսները ունեն հիմնական նյութի այս կամ այն կողմը պարզաբանելու , լրացնելու միտում / Ա. Հակոբյան, Ս. Գևորգյան, Ա. Հովհաննիսյան, Ա. Դավթյան Մանկավարժական հաղորդակցում, էջ115/:



«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

Ուսուցման կազմակերպան անհատականացված տեխնոլոգիաների կիրառումը կարող ենք ասել, որ ամբողջովին հիմնված է ուսուցման հումանիստական սկզբունքի վրա, քանի որ նրա կիրառման համար անհրաժեշտ է հաշվի առնել ուսուցանվողների տաիրքային-անհատական առանձնահատկությունները, նրանց գիտելիքների, կարողությունների և հմտությունների զարգացվածության աստիճանը և այլն:





1.2 Անահատականացված ուսուցման հայեցակարգերը և դրանց մեթոդական ու բովանդակային առանձնահատկությունները

Ուսուցման անհատականացված տեխնոլոգիայի հեղինակներն են Մանկավարժական գիտությունների դոկտոր Ունտ Ինգե Էրիխովան, Ա.Ս. Գրանիցկայա, Հոգեբանության դոկտոր Վ.Դ. Շադրիկովը:

Ունտը նշում է, որ ժամանակակալից պայմաններում անհատականացված ուսուցման կարևորագույն ձև է համարվում թե՛ տանը և թե՛ դպրոցում սովորողի ինքնուրույն աշխատանքը: Ըստ Ինգե Ունտի անհատականացված ուսուցման բովանդակության և մեթոդիկայի առանձնահատկություններն են՝ ինքնուրույն աշխատանքի համար անհատական ուսումնական հանձնարարություններ, կնիքով աշխատանքային տեսրեր, անհատականացված ինքնուրույն աշխատանքի ղեկավարում: Գործող ուսումնական գրականության տիրապետում:

Գրանիցկու դաս-դասարանային համակարգում հնարավոր է դասի այնպիսի կազմակերպում, որի դեպքում ժամանակի 60-80տոկոսը ուսուցիչը կարող է տրամադրել սովորողների անհատական աշխատանքին: *Ա.Ս.Գրանիցկայան առանձնանցնում է՝ դասի օրհգինալ ոչ երկարատև կառուցվածք:*

Մաս I–դասընթաց բոլորի համար

Մաս II՝ երկու զուգահեռ գործընթացներ՝ սովորողների ինքնուրույն աշխատանք և ուսուցչի անհատական աշխատանք յուրաքանչյուր սովորողի հետ: Ընդհանրական սխեմաների



«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

օգտագործում/Շատալով. Շատալովի դասերում ամեն ինչ անսովոր է: Երեխաները աշխատում են ինքնուրույն, նրանք չեն վախենում դժվար խնդիրներից, քանի որ գիտեն, որ դրանք իրենց ուժերի սահմաններում են: Հաշվետու ազդանշաններ/քարտ/դա ուսումնասիրվող թեմայի հիմնական ուղղությունների սխեմատիկ պատկերն է, որը թույլ է տալիս յուրաքանչյուր սովորողի որսալ գաղափարի իմաստը, մտապահել կարևորը, որը կազմված է մասերից: Սա էլ խթան է, որ երեխաները բոլորը սիրեն Շատալովի դասերը: Այստեղ աշխատում է երեխայի երևակայությունը, ստեղծագործականությունը, դասերի ընթացքում ոչ ոք իրեն չարաձճի չի պահում: Դասը պատասխանելիս բոլորը պատասխանում են ըստ հաշվետու ազդանշանների և բոլորն էլ բարձր գնահատականներ են ստանում/, աշխատանքներ գույգ փոփոխականներով /Դյաչենկո/: //Границкая А, С. Научить думать и действовать. Адаптивная система обучения в школе. - М : Просвещение, 1991.//

Ըստ Շադրիկովայի հիպոթեզի , ընդունակությունների զարգացումը էֆֆեկտիվ է, եթե երեխային տաս խնդիրը բարդացնող նկար, մոտիվացնես ուսումնական գործընթացը, բայց սովորողին հնարավորություն տաս աշխատել այն մակարդակում, որը նրա համար այսօր հնարավոր է հասանելի: Շադրիկովան ուսուցման բովանդակության մեջ առանձնացնում է ուսումնական պլանը, ծրագրեր և մեթոդական պլաններ չորս մակարդակների համար, որոնք թույլ են տալիս անցկացնել ուսուցումը կախված յուրաքանչյուր սովորողի ընդունակություններից: Ընտրելով յուրաքանչյուր առարկայի համար բարդության հնարավոր մակարդակ, աշակերտները դասարաններում հանդես են գալիս փոփոխական կազմով: Եվ առանց կորցնելու թեմայի շրջանակն ու բովանդակությունը, միասին կշարժվեն դեպի ուսումնական առարկայի ներքնայնացման:

Բարդության 6 մակարդակները թույլ են տալիս պրակտիկորեն ներգրավել բոլոր երեխաներին, փողոց չնետել չհասցնողներին, կազմակերպել ուսումնական գործընթացը, հնարավորություն բոլորի համար, հարմարեցվածությունը սովորողների հնարավորություններին և նրանց զարգացմանը:

Վերոնշյալ 3 հայեցակարգերի հիմնական սկզբունքներն են.

- Անհատականացումը ուսումնական գործընթացի ռազմավարությունն է
- Անհատականացումը համարվում է անհատականության ձևավորման կարևոր գործոն
- Բոլոր ուսումնական առարկաների ժամանակ կիրառել անհատականացված ուսուցում



«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

- Ուսումնական գործունեության և անհատական աշխատանքի ինտեգրացիա
- Անհատական տեմպին և ոճին համապատասխան ուսուցում
- Անհատականացված ուսուցման նախադրյալ համարվում է դպրոցականների առանձնահատկությունների ուսումնասիրումը, որոնք նախ և առաջ պետք է հաշվի առնել անհատականացված ուսումնական աշխատանքի ժամանակ. ուսուցանելիությունը, ուսումնական կարողություններ, ճանաչողական հետաքրքրություններ:
- Անհատական աշխատանքը պահանջում է համընդհանուր հմտությունների և կարողությունների զարգացման ադեկվատ մակարդակ:

Այսպիսով կարող ենք ասել, որ վերոնշյալ երեք հայեցակարգերում էլ մեծ տեղ էր հատկացվում սովորողի ինքնուրույն աշխատանքին: Իսկապես, ըստ իս երեխայի անհատական աշխատանքը շատ կարևոր է նրա անձնային զարգացման համար: Պետք է ուղակի ճիշտ կազմակերպել այդ գործունեությունը, որպեսզի այն պրոդուկտիվ լինի:



1.3 Անհատականացված ուսուցման տեխնոլոգիայի ընդհանուր առանձնահատկությունները

Անհատականացված ուսուցման տեխնոլոգիան, ինչպես ուսուցման ցանկացած այլ տեխնոլոգիա, ունի իր առանձնահատկությունները, որոնցով այն տարբերվում է մյուս տեխնոլոգիաներից: Կիրառվելիք տեխնոլոգիայի ընտրության ժամանակ ուսուցիչը պարտավոր է նախապես ծանոթ լինել առանձնահատկություններին և այն համադրել ուսուցանվողի կամ ուսուցանվողների խմբի ընդհանուր, անհատական առանձնահատկությունների հետ, քանի որ դա չանելու դեպքում, կարող է բացասական հետևանք ունենալ: Իսկ արդյունքը շեշտակի կտարբերվի ակնկալվող վերջնարդյունքից:

Անհատականացված ուսուցման տեխնոլոգիայի կիրառման առանձնահատկություններն են.

- Գործոնների հաշվառում, որոնք բացատրում են սովորողների չհասցնելը/խնդիրներ գիտելիքներում, մտածողության, ուսումնական աշխատանքում հմտությունների դեֆֆեկտներ, աշխատունակության իջեցում և այլն/:
- Գիտելիքների, կարողությունների և հմտությունների, մտածողության գործընթացի անհատական թերություններ հաղթահարման ուղիների որոնում:
- Ընտանեկան դաստիարակության, ինչպես նաև թույլ կամքի, դրդապատճառների թերությունների հաշվառում և հաղթահարում :
- Տաղանդավոր և շնորհալի սովորողների ուսումնական գործընթացի օպտիմալացում/ ստեղծագործական գործունեություն, դասարանական և արտադպրոցական աշխատանքների համադրում/ :
- Ուսումնական գործընթացի մի շարք էլեմենտների ազատ ընտրության ապահովում:
- Համընդհանուր կարողությունների և հմտությունների ձևավորում :
- Սովորողների ադեկվատ ինքնագնահատականի ձևավորում:
- Ուսումնական տեխնիկական միջոցների կիրառում:

Անհատականացված ուսուցման տեխնոլոգիայի կիրառման ժամանակ արդյունավետ է կիրառել այլընտրանքային այլ տեխնոլոգիաների իրականացման ժամանակ կիրառվող



«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

այնպիսի մեթոդներ և տեխնիկաներ , որոնց կիրառությամբ ուսուցանողը կարող է ակնկալել և ստանալ բավականին լավ արդյունք: Այդպիսի մեթոդներից են մտագրոհն իր ենթատեսակներով, խաղային, նախագծային...

Այսպիսով, կարող ենք ասել, որ եթե ուսուցանողը պատրասվում է իրականացնել ուսուցման անհատականացման տեխնոլոգիան, ապա նախ և առաջ պետք է ճիշտ գնահատի իր մասնագիտական և անձնային որակները, աշակերտի տարիքային և զարգացման առանձնահատկությունները, տիրապետի հաղորդակցման միջոցներին, ունենա մանկավարժական տակտ և էթիկա:

<< Վերլուծելով սովորում ենք: Աձում է այն մանկավարժը, որը դասեր է քաղում իր և ուրիշների սխալներից: Պահանջկոտ վերլուծությունը, ինքնավերլուծությունը մանկավարժական վարպետության հասնելու ուղին է>>:

//Подласый И. П. Педагогика , М., “Владос”, 2003, стр 176//



Եզրակացություն

Ուսումնասիրելով ուսուցման այլընտրանքային տեխնոլոգիաներից անհատականացված ուսուցման տեխնոլոգիան՝ կարող ենք ասել, որ այն արդյունավետ տեխնոլոգիա է, սակայն մեր օրերում այն դեռևս կմնա այլընտրանքային, քանի որ դրա կիրառման համար անհրաժեշտ պայմաններ և միջոցներ չկան: Այս տեխնոլոգիան հիմնականում կիրառվում է անհրաժեշտ դեպքերում/ վարքի, առողջության հետ խնդիրներ ունեցող, բացառիկ ունակություններ ունեցող/ ինդիգո/ անձանց հետ/: Անհատականացված ուսուցման տեխնոլոգիայի կարևոր առանձնահատկությունն այն է, որ մեծ տեղ է տրվում ուսուցանվողի անհատական առանձնահատկությունների հաշվառման սկզբունքին և ինքնուրույն աշխատանքին: Այս տեխնոլոգիայի վերաբերյալ հայեցակարգերում ակնհայտ է, որ առանցքային է սովորողի ինքնուրույն աշխատանքը: Իսկապես, ըստ իս երեխայի անհատական աշխատանքը շատ կարևոր է նրա անձնային զարգացման համար: Պետք է ուղղակի ճիշտ կազմակերպել այդ գործընթացը, որպեսզի այն առավել արդյունավետ լինի: Այստեղ չենք կարող չշեշտել ուսուցչի մասնագիտական <<անձը>>, քանի որ եթե այն ձևավորված և զարգացած չլինի, <<ուսուցիչը>> չի կարող ճշգրտորեն և կոմպետենտ իրականացնել այս տեխնոլոգիան: Իսկ եթե կիրառման ընթացքը ճիշտ ճանապարհից շեղվի, աշխատանքը կլինի անարդյունավետ և վերջնական արդյունքն էլ <<խոտան>>: Ինչպես արտադրության, այնպես էլ մանկավարժության ոլորտում թողարկված <<խոտանը մերժվում է հասարակության կողմից>>:

Այսպիսով, կարող ենք ասել, որ եթե ուսուցանողը պատրասվում է իրականացնել ուսուցման անհատականացման տեխնոլոգիան, ապա նախ և առաջ պետք է ճիշտ գնահատի իր մասնագիտական և անձնային որակները, աշակերտի տարիքային և զարգացման առանձնահատկությունները, տիրապետի հաղորդակցման միջոցներին, ունենա մանկավարժական տակտ և էթիկա:

Առաջարկում են հանրակրթական ուսումնական հաստատություններում զգալի տեղ հատկացնել անհատականացված ուսուցմանը, դասավանդողների մոտ վերապատրաստումների միջոցով ձևավորել անհատականացված ուսուցման տեխնոլոգիայի կիրառման կարողություններ և հմտություններ, կիսվել տեխնոլոգիայի



«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

կիրառման առաջավոր փորձով և խթանել բոլոր աշակերտների անհատական առանձնահատկությունների զարգացմանը:



Օգտագործած գրականության ցանկ

1. Վարդունյան <<20-րդ դարի մանկավարժական մոտեցումներ>>
2. Ա. Հակոբյան, Ս. Գևորգյան, Ա. Հովհաննիսյան, Ա. Դավթյան<< Մանկավարժական հաղորդակցում>> -Երևան 2010
3. Ա. Նալչաջյան <<Հոգեբանության հիմունքներ >>, Երևան 1997
4. Подласый И. П. Педагогика , М., “Владос”, 2003
5. *Боголюбов С.К.* Индивидуальные задания по курсу черчения. - М., 1994.
6. *Границкая А, С.* Научить думать и действовать. Адаптивная система обучения в школе. - М : Просвещение, 1991.
7. *Кирсанов А.А.* Индивидуализация учебной деятельности как педагогическая проблема. -Казань, 1982.
8. *Рабунский В.С.* Индивидуальный подход в процессе обучения школьников: на основе анализа их самостоятельной учебной деятельности. - М., 1975.
9. <https://studfile.net/preview/7338551/page:4/>